ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/1890 «24» 12 2021թ.

Ձեր

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը ամբողջական միակողմանի լուծելու մասին

27.09.2021 թվականին ՀՀ ոստիկանության կարիքների համար թևքանշանների ձեռքբերման նպատակով ՀՀ ոստիկանության և « ԷՄԳԱ » ՍՊԸ -ի միջև կնքվել է թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7 ծածկագրով պայմանագիր: Վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ապրանքը մատակարարել սույն թվականի մինչև դեկտեմբերի 20-ը:

« ԷՄԳԱ » ՍՊԸ -ի կողմից ապրանքի մատակարարումը չի իրականացվել պայմանագրով սահմանված ժամկետում, ուստի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է զեկուցագիր, տեղեկանք համապատասխան չափաբաժնի վերաբերյալ:

Պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքը կազմակերպության կողմից չի մատակարավել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2021-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7 ծածկագրով պայմանագիրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի ամբողջական լուծում է պայմանագիրը :

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունից կգանձվի որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները, համապատասխանաբար

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Կոնվերսբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայանգրի տեսքով որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 303200 (երեք հարյուր երեք հազար երկու հարյուր) և 454800 (չորս հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900008000698 և N 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ոստիկանության

գնդապետ **Վ.Մովսիսյան**